ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ ՀԵՌԱԳԻՐԸ

Թագաւոր Կայսրը Բարձրագոյնս բարեհաճել է հեռագրել Կովկասեան փոխարքայ Գրաֆ Վորոնցով Դաշկովին.

Յայտնեցէք Ամենայն Հայոց Գէորգ Կաթուղիկոսին՝ հայ հոգևորականութեանը և Էջմիածնի տաճարում խմբուած բոլոր ժողովրդին իմ սրտագին շնորհակալութիւնը աղօթքների և ինձ արտայայտած զգացումների համար.

ՆԻԿՈԼԱՅ

Այս հեռագիրը պատասխանն է Գեներալ-Ադիւտանտ Գրաֆ Վորոնցով Դաշկովի Նորին Մեծութեանը ուղղած հետևեալ ամենահպատակ հեռագրի.

«Լիվադիա. Թագաւոր Կայսրին.

Ամենայն Հայոց Կաթուղիկոս Գէորգը յայտնել է ինձ հեռագրով, որ իւր՝ Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի կոչման մէջ հաստատուելու առիթով Էջմիածնի Մայր Աթոռի տաճարում վանքի միաբանութիւնը բազմաթիւ աղօթողների ներկայութեամբ սոյն ապրիլի 4-ին Ձերդ Կայսերական Մեծութեան և Թագաւորող ամբողջ Տան առողջութեան համար գոհացողական մաղթանք է կատարել։ Գէորգ Կաթուղիկոսը միանգամայն խնդրում է ինձ արկանել առ ոտս Ձերդ Կայսերական Մեծութեան—հայ եկեղեցու Օգոստափառ Հովանաւորիդ—իւր իսկ, հայ հոգևորականութեան և հօտի ամենահպատակ զգացումները։

Վերոյիշեալը մատուցանում եմ Ձերդ Մեծութեան Բարձրագոյն բարեհայեցողութեանը.

Գենեռալ-Ադիւտանտ Գրաֆ Վորոնցով Դաշկով: